ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԵՎ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԽԹԱՆՆԵՐԸ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՍՄԿԿ XXVII համագումարը հաստատեց երկրի սոցիալ-տնտեսական զարգացումն արագացնելու ստրատեգիական կուրսը, որի նպատակը սովետական հասարակության կյանքի բոլոր կողմերի որակական վերափոխումն է։ Արագացման ստրատեգիան նշանակում է «ամենից առաջ տնտեսական աճի տեմպերի բարձրացում։ Բայց ոչ միայն։ Նրա էությունը աճի նոր որակն է՝ արտադրության ըստ ամենայնի ինտենսիվացումը գիտատեխնիկական առաջադիմության, էկոնոմիկայի կառուցվածքային վերակառուցման, աշխատանքի կազմակերպման ու խթանման արդյունավետ ձևերի հիման վրա»[1]։ Այս խնդիրների իրականացումը կապված է սոցիալիզմի առավելությունների օգտագործման և մարդկային գործոնի ակտիվացման հետ. «Գլխավորը, որ պետք է ապահովի մեր հաջողությունը, մասսաների կենդանի ստեղծագործությունն է, սոցիալիստական կարգերի հսկայական հնարավորությունների և առավելությունների առավելագույն չափով օգտագործումը»[2]։ Սոցիալիստական հասարակության առավելություններն օգտագործել՝ նշանակում է. ա) մոբիլիզացնել սոցիալիստական արտադրահարաբերություններից բխող և դրանցով պայմանավորված բոլոր խթաններն ու հնարավորությունները՝ արտադրողական ուժերի զարգացման, գիտատեխնիկական հեղափոխության խոր ու համակողմանի ծավալման, աշխատանքի արտադրողականության բարձրացման համար։ Գտնել, մշակել ու կիրառել այնպիսի մեթոդներ ու ձևեր, որոնց միջոցով արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների զարգացման շարժիչ ուժերն ու խթանները ներդաշնակորեն բուգակցվեն և ավելի արդյունավետ դարձնեն գիտատեխնիկական հեղափոխության ծավալումն ու խորացումը, բ) առավել ակտիվորեն շարժման մեջ դնել սուբյեկտիվ գործոնը, որն արտահայտվում է կոմունիստական կուսակցության, սովետական պետության և աշխատավորական կոլեկտիվների ստեղծագործական գործունեության, արտադրության գիտական կառավարման ամբողջ համակարգի մեջ, գ) գիտականորեն հիմնավորված ու արդյունավետորեն կազմակերպել մարդու և բնության փոխհարաբերությունը։

Խոսելով հասարակական-տնտեսական որևէ սիստեմի նկատմամբ մյուսի առավելությունների մասին, հարկավոր է ամենից առաջ նկատի ունենալ առաջինի այն առանձնահատկությունները, որոնք արտադրության և ամբողջությամբ վերցրած՝ հասարակական կյանքի զարգացման համար ռեալ հնարավորություններ են ստեղծում, խթանում արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների զարգացումը։ Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը ցույց են տվել, որ արտադրողական ուժերի, մասնավորապես՝ տեխնիկայի զարգացման սոցիալական հիմքը պետք է փնտրել ոչ թե բուն տեխնիկայի զարգացման առանձնահատկությունների մեջ, այլ՝ տվյալ հասարակության տնտեսական կառուցվածքում ու պահանջմունքների մեջ[3], քանի որ իբրև արտադրական հարաբերությունների կրողներ են հանդես գալիս մարդիկ՝ ելնելով իրենց պրակտիկ պահանջմունքներից ու շահերից։ ՍՄԿԿ Կենտկոմի հունիսյան (1987 թ.) պլենումում Մ. Ս. Գորբաչովը նշեց. «Տեսականորեն և

---

1 *«ՍՄԿԿ XXVII համագումարի նյութերը», Երևան, 1986, էջ 30։*

2 *Նույն տեղում։*

3 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 39, с. 174.

գործնականորեն անվիճելի է, որ աշխատավորների, որպես արտադրության տերերի, շահը ամենաուժեղ շահն է, սոցիալ-տնտեսական և գիտատեխնիկական առաջադիմության արագացման ամենահզոր շարժիչ ուժը»[4]։

Հասարակության, դասակարգի և անհատի պահանջմունքները արտադրողական ուժերի և հասարակական հարաբերությունների զարգացման խթանների օբյեկտիվ հիմքն են։ Խթանների սուբյեկտիվ կողմն այդ պահանջմունքների գիտակցումն է։ Ուրեմն, մարդկանց պահանջմունքները սոցիալական օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների միասնությունն են։ Իրենց բովանդակությամբ պահանջմունքները օբյեկտիվ են, որովհետև հասարակության զարգացման յուրաքանչյուր փուլում պահանջմունքների բնույթը պայմանավորված է արտադրողական ուժերի զարգացման մակարդակով ու արտադրական հարաբերությունների բնույթով։ Իրենց դրսևորման ձևով պահանջմունքները սուբյեկտիվ են, որովհետև արտահայտում են մարդկանց հետաքրքրությունը, նաև վերաբերմունքը նյութական ու հոգևոր արժեքների նկատմամբ։ Եվ որպեսզի պահանջմունքները դառնան աշխատանքի արտադրողականության բարձրացման ու հասարակական հարաբերությունների զարգացման խթաններ, դրանք պետք է ճանաչվեն։ Ֆ. Էնգելսը նշել է, որ մարդու գործողության բոլոր դրդապատճառները պետք է անցնեն նրա գլխով, պետք է վերածվեն նրա կամքի դրդապատճառների[5]։ Իսկ թե վերջիններս ինչպես կարտահայտվեն, մեծապես պայմանավորված է պահանջմունքների կոնկրետ բովանդակությամբ, արտադրական հարաբերությունների բնույթով, ինչպես նաև սուբյեկտի հոգևոր զարգացման աստիճանով։

Սոցիալիզմի նյութատեխնիկական բազայի ամրապնդումն ու հարստացումը և սոցիալիստական դեմոկրատիայի ընդլայնումն իրենց հետ բերում են ոչ միայն աշխատավորների կենսագործունեության ակտիվացում, այլև նրանց նյութական բարեկեցության բարձրացում ու հոգևոր հարստության նոր վերելք։ Վերջին քառորդ դարում մեր երկրում բնակչության մեկ շնչի հաշվով ռեալ եկամուտներն ավելացել են 2,6, իսկ սպառման հանրային ֆոնդերը՝ ավելի քան 5 անգամ[6]։ Այս ամենը իր հերթին հասարակության և նրա անդամների պահանջմունքների մեծացման հիմք է, որն էլ անհրաժեշտություն է դարձնում աշխատանքի արտադրողականության հետագա բարձրացումը։

Ինքնին վերցրած սոցիալիստական արտադրական հարաբերությունները դեռևս աշխատանքի արտադրողականության բարձրացման անմիջական խթաններ չեն, այլ՝ շարժիչ ուժեր, որոնք ծնում, առաջ են բերում աշխատանքի արտադրողականության բարձրացման համար անհրաժեշտ խթաններ ու շարժառիթներ՝ դառնալով դրանց օբյեկտիվ հիմքը։ Իրենց դրսևորման ձևով ու մարդկանց գործունեության համար ունեցած նշանակությամբ աշխատանքի արտադրողականության բարձրացման խթաններն ու շարժառիթները տարբերվում են նրանով, որ՝ ա) խթաններն արտահայտում են մարդկանց գործունեության դրդապատճառի արտաքին պայմանավորվածությունը, իսկ շարժառիթները՝ ներքին։ Շարժառիթները կատարում են ոչ միայն դրդիչ, այլև դրդապատճառներն արդարացնելու, դրանք յուրահատուկ ձևով հիմնավորելու և անմիջականորեն գործողության մեջ դնելու ֆունկցիա։ Դա բացատրվում է նրանով, որ շարժառիթն իր մեջ ներառնում է նաև դրդապատճառի անհատական արժեքավորումը։ Այդ պատճառով էլ այս կամ այն շարժառիթը կարող է ընդհանուր լինել մի շարք մարդկանց համար։ բ) Խթաններն արտահայտում են դրդապատճառի սոցիալական նշանակությունը, հետևաբար ավելի արմատական ու կայուն դրդապատճառներ են, մինչդեռ շարժառիթներն արտահայտում են մարդկանց անմիջական պահանջմունքները, գործողության ավելի փոքր շրջանակներ ունեն և կարող են

---

4 «Սովետական Հայաստան», 26. VI. 1987։

5 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 21, с. 308.

6 «ՍՄԿԿ XXVII համագումարի նյութերը», էջ 31։

դրդապատճառ հանդիսանալ առանձին մարդու, ընտանիքի, կոլեկտիվի գործունեության համար։ Այդ պատճառով էլ ամեն շարժառիթ չէ, որ կարող է վերածվել արտադրողական ուժերի զարգացման ու աշխատանքի արտադրողականության բարձրացման խթանի։

Սոցիալիստական արտադրական հարաբերությունների հիման վրա ձևավորվում և գործում են աշխատանքի արտադրողականության բարձրացման բազմաթիվ խթաններ։ Ամենաընդհանուր բնութագրությամբ դրանք կարելի է բաժանել երկու հիմնական խմբի՝ նյութական և հոգևոր (բարոյական) խթաններ։ Նյութական խթաններն արտադրության եղանակով պայմանավորված այնպիսի դրդապատճառներ են, որոնք կազմում են մարդկանց նյութական պահանջմունքների ու շահերի համակարգը և իրենց դրսևորման ձևով սուբյեկտիվ շահագրգռվածություն են այնպիսի արժեքների նկատմամբ, որոնք բավարարում են մարդկանց այս կամ այն պահանջմունքները։ Իրենց բնույթով ու սոցիալական նշանակությամբ՝ խթանները տարբեր են, որոնցից առավել կարևոր են հետևյալ տեսակները. 1) Նյութական խթաններ, որոնց հիմքը կազմում են կատարված աշխատանքի համար ստացվող միջոցները։ Այլ խոսքով, այս կարգի խթանների հիմքն անձնական նյութական շահագրգռվածությունն է։ 2) Նյութական խթաններ, որոնց հիմքը աշխատանքային պայմանների բարելավման ձգտումն է։ 3) Նյութական խթաններ, որոնց հիմքը կյանքի ընդհանուր պայմանների բարելավման ձգտումն է։

Կոմունիստական հասարակության զարգացման առաջին փուլում պահպանվում և մարդկանց արտադրական գործունեության խթանների համակարգում առանձնահատուկ նշանակություն է ստանում անձնական նյութական շահագրգռվածությունը։ Այն աշխատանքի նկատմամբ մարդու վերաբերմունքի գլխավոր ազդակն է, մարդկանց հետ արտադրատնտեսական հարաբերությունների մեջ մտնելու նրա ձգտման գլխավոր խթանը։ Այդ պատճառով էլ անձնական նյութական շահագրգռվածությունը մարդու աշխատանքային ակտիվության և աշխատանքի արդյունավետության բարձրացման վճռական ու անմիջական խթանն է. «Երբ լավ աշխատողի ու անփութ աշխատողի աշխատանքը վարձատրվում է միատեսակ, ապա դա մեր սկզբունքների կոպիտ խախտում է։ Եվ, ամենից առաջ, անթույլատրելի աղավաղումն է սոցիալիզմի հիմնական սկզբունքի. «Յուրաքանչյուրից՝ ըստ ընդունակությունների, յուրաքանչյուրին՝ ըստ աշխատանքի», որի մեջ ամփոփված է նոր հասարակարգի սոցիալական արդարության էությունը»[7]։ Այդ պատճառով էլ «հարկավոր է, որ աշխատավարձի բնագավառում պետության քաղաքականությունը ևս ապահովի աշխատավարձի խստիվ կախվածությունը աշխատանքի քանակից ու որակից»[8]։ Այդ են պահանջում սոցիալիզմի արտադրողական ուժերի զարգացման ժամանակակից մակարդակը և աշխատավորների հոգևոր հասունության աստիճանը։

Աշխատավորներին նյութապես խրախուսելը Վ. Ի. Լենինը համարում էր սոցիալիստական տնտեսավարության հանգուցային հարցերից մեկը։ Վ. Ի. Լենինը սովորեցնում էր, որ նյութական խրախուսումը ամենևին էլ չի հակասում աշխատանքի նկատմամբ կոմունիստական վերաբերմունքի ձևավորմանը։ Նյութական խրախուսումը նշանակում է բարիքների բաշխման և ծպատման կազմակերպման այնպիսի ձև, որն աշխատողին մղում է դեպի աշխատանքի ավելի բարձր արտադրողականություն և որակ։ «Հարկավոր է ժողովրդական տնտեսության յուրաքանչյուր խոշոր ճյուղ կառուցել անձնական շահագրգռվածության վրա», «հարկավոր է շահագրգռել յուրաքանչյուր մասնագետի այն նպատակով, որ նա շահագրգռված լինի արտադրության զարգացմամբ»,— գրել է Վ. Ի. Լենինը[9]։ Հանդես գալով Տրոցկու առաջ

7 Նույն տեղում, էջ 64։

8 Նույն տեղում։

9 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 44, էջ 199։

քաշած այն սխալ դրույթի դեմ, ըստ որի հարկավոր է հարվածայնություն արտադրության մեջ, բայց հավասարաչափ բաշխում սպառման մեջ, Վ. Ի. Լենինը գրել է. «Հարվածայնությունը նախապատվություն է ... իսկ ... նախապատվությունը հարվածայնության մեջ, նախապատվություն է սպառման մեջ։ Առանց դրան նախապատվությունը երազանք է, ամպիկ»[10]։ Վ. Ի. Լենինը սոցիալիստական տնտեսավարության հիմնական միջոցներից մեկը համարում էր մեծ հեղափոխության շնորհիվ ստեղծված խանդավառությունը նյութական խթաններով լրացնելու անհրաժեշտությունը։ «Ոչ թե անմիջական խանդավառության վրա հենվելով,— նշում էր նա,— այլ մեծ հեղափոխության ստեղծած խանդավառության օգնությամբ, հենվելով անձնական շահի, անձնական շահագրգռվածության, տնտեսական հաշվարկի վրա, աշխատեցեք կառուցել նախ ամուր կամուրջներ, որոնք տանում են դեպի սոցիալիզմ, այլ կերպ դուք չեք մոտենա կոմունիզմին»[11]։ Ուրեմն, սոցիալիզմը ոչ թե վերացնում է աշխատանքի և նրա արդյունքների նկատմամբ մարդկանց նյութական շահագրգռվածությունը, այլ միայն վերջինիս դասակարգային, հակամարտ բնույթը։

Հանրային սեփականությունն այն հիմնական նախապայմանն է, որը հնարավորություն է տալիս սոցիալիզմի ժամանակ անձնական շահագրգռվածության բարձրացումը զուգակցել կոլեկտիվ շահագրգռվածության հետ, վերացնել անհատի և կոլեկտիվի, կոլեկտիվի և հանրության շահերի միջև եղած հակամարտությունը։ Կոմունիզմի շինարարության առաջին փուլում արդեն աշխատավորներն իրենց աշխատանքի զգալի մասը ներդնում են ի շահ հասարակության բարօրության, որովհետև հասարակության բարեկեցությունը յուրաքանչյուրի և բոլորի բարեկեցության ու բազմակողմանի զարգացման պայմանն է։ Աշխատավորները սպառման հանրային ֆոնդերից զգալի կենսամիջոցներ են ստանում։ Արդեն այժմ սպառման հանրային ֆոնդերին է տրվում նյութական բարիքների և սպասարկումների մեկ երրորդ մասը[12]։ Սակայն, ինչպես նշվեց ՍՄԿԿ XXVII համագումարում, «դրանք ամենևին էլ բարեգործական ֆոնդեր չեն։ Դրանք կարևոր դեր են խաղում հասարակության բոլոր անդամների կրթության ու կուլտուրայի մատչելիության ապահովման, երեխաների դաստիարակության պայմանների հավասարեցման, բոլոր նրանց կյանքի թեթևացման գործում, ովքեր այս կամ այն հանգամանքների բերումով միանվագ կամ մշտական օգնության կարիք ունեն։ Դրա հետ միասին դա նաև որակյալ, բարեխիղճ աշխատանքի խրախուսման, խթանման միջոց է»[13]։ Սա նշանակում է, որ սոցիալիզմի զարգացման արդի փուլում մարդկանց անձնական նյութական շահերը չեն նույնացվում հասարակության նյութական շահերի հետ։ Անհատի և հասարակության շահերի միջև եղած տարբերության հաղթահարումը նշանակում է այն, որ արտադրության ու բաշխման, կուտակման ու սպառման բնագավառում անհատի և հասարակության շահերը համընկնում են, որովհետև դրանց զարգացման ու բարեկեցության աղբյուրը նույնն է՝ արտադրության միջոցների հանրային սեփականությունը։ Այդ հիման վրա էլ տեղի է ունենում անձնական և հասարակական շահերի մերձեցում՝ հասարակական շահերը անձնականի վերածելու գերակշռությամբ։

Անձնական և հասարակական շահերի մերձեցման ու ներդաշնակ զարգացման հիմնական օղակն աշխատանքային կոլեկտիվն է։ Վերջինիս անդամների հարաբերությունների զարգացման, նրանցից յուրաքանչյուրի աշխատանքային կարողությունների ու հմտության կատարելագործման, աշխատանքի նկատմամբ մարդկանց վերաբերմունքի ու համախմբվածության որոշիչ նախադրյալը անհատի և կոլեկտիվի շահերի համապատասխանու-

---

10 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 42, էջ 263։

11 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 44, էջ 181։

12 «ՍՄԿԿ XXVII համագումարի նյութերը», էջ 65։

13 Նույն տեղում։

թյան աստիճանն է։ Այդ շահերի ներդաշնակ զարգացումը շատ բանով է որոշում կոլեկտիվի, ամբողջ հասարակության բարոյաքաղաքական միասնությունն ու կայունությունը։ Ընդ որում, այդ միասնության մեջ առաջատարը կոլեկտիվ շահերն են, որովհետև հենց կոլեկտիվի շահերի միջոցով ու նրանց մեջ են արտահայտվում անհատի շահերը։ Այլ կերպ համատեղ աշխատող մարդկանց խումբը սոցիալիստական արտադրական կոլեկտիվ չի դառնա։

Եթե անձնական նյութական շահագրգռվածությունը գործունեության խթան է միայն ավյալ անհատի համար, ապա կոլեկտիվ շահերը աշխատանքային կոլեկտիվի գործունեության դրդապատճառներ են։ Նյութական շահագրգռվածության այդ ձևի մեջ դրսևորվում է նոր մարդու բարձր գիտակցությունը, որը կոլեկտիվի և հասարակության բարօրության մեջ տեսնում է նաև իր բարօրությունը և այդ պատճառով էլ շահագրգռված է ոչ միայն իր անձնական աշխատանքի արդյունքով, այլև ողջ կոլեկտիվի աշխատանքի արդյունքով։ Ըստ էության սա հենց այն օղակն է, որի միջոցով նյութական շահագրգռվածությունն աստիճանաբար պետք է բարձրանա բարոյական շահագրգռվածության աստիճանի, դառնա աշխատանքի՝ իբրև հասարակական պարտքի նկատմամբ մարդու վերաբերմունքի արտահայտություն ու չափանիշ։ Շեշտելով սոցիալիզմի զարգացման արդի փուլում կոլեկտիվ շահերի առաջատար նշանակությունը, ՍՄԿԿ XXVII համագումարը նշեց. «արտադրական ճյուղերում բանվորների և ծառայողների դրույքների ու ռոճիկների տասներկուերորդ հնգամյակի համար նախատեսվող բարձրացումը առաջին անգամ կընթանա հիմնականում ձեռնարկությունների վաստակած միջոցների հաշվին և այդ միջոցների սահմաններում։ Նման կարգն ավելի ակտիվորեն կներգործի տեխնիկական առաջադիմության արագացման, արտադրության արդյունավետության բարձրացման վրա»[14]։

Իր հարաբերական ինքնուրույնությամբ հանդերձ, կոլեկտիվի նյութական շահագրգռվածությունը մեկուսացված չէ անձնական նյութական շահագրգռվածությունից։ Ավելին. կոլեկտիվի շահերն աշխատանքի արտադրողականության բարձրացման խթաններ են դառնում ամենից առաջ այն պատճառով, որ դրանց մեջ արտահայտվում են բոլորի և յուրաքանչյուրի նյութական շահերը։ Այդ պատճառով էլ կոլեկտիվ նյութական շահագրգռվածությունն ունի նաև դաստիարակչական վիթխարի նշանակություն։ Դա այն հիմքն է, որի վրա կոմունիստական աշխատանքային բարոյականության մշակումը գործնականում դառնում է հնարավոր։ Աշխատանքի նկատմամբ հավասար իրավունքի և անհավասար աշխատանքի համար վարձատրության տարբերության գոյությունը մարդկանց շահագրգռում է ավելի շատ ու որակյալ արդյունք ստեղծելու, որը մեծապես նպաստում է տնտեսության զարգացմանը, աշխատանքի նկատմամբ նոր վերաբերմունքի դաստիարակմանը, մարդու հոգեբանության վերափոխմանը։ Բացի այդ, ըստ աշխատանքի վարձատրությունը բացառում է մարդկանց մի խմբի կողմից իրենց պարտականությունները մյուսների վրա դնելը, որն իր հերթին նպաստում է մարդու մեջ մշակելու փոխադարձ օգնության, կոլեկտիվիզմի, կոլեկտիվ շահերը իր անձնականը համարելու որակներ։ Իսկ առանց աշխատանքի նկատմամբ գիտակցական վերաբերմունքի, առանց մասսաների կողմից հասարակական հիմնական շահերի գիտակցման սոցիալիզմն անհնարին է։

Աշխատանքի արտադրողականության բարձրացման հոգևոր կամ բարոյական խթանները մարդկանց գործունեության այնպիսի դրդապատճառներ են, որոնց հիմքը մարդկանց հոգևոր պահանջմունքների բավարարման ձգտումն է։ Հոգևոր պահանջմունքների բնույթը որոշվում է ամենից առաջ արտադրության տվյալ եղանակով, նյութական պահանջմունքների, պայմանների ու շահերի մակարդակով, տիրապետող իրավական, բարոյական, գեղագիտական, փիլիսոփայական հայացքների ամբողջությամբ, ինչպես նաև

14 Նույն տեղում, էջ 64։

կոնկրետ անհատի կամ կոլեկտիվի հոգևոր զարգացման աստիճանով։ Իրենց սոցիալական նշանակությամբ հոգևոր պահանջմունքները, հետևաբար նաև հոգևոր խթանները նույնքան օբյեկտիվ են, որքան նյութական պահանջմունքներն ու խթանները։ Հոգևոր կամ բարոյական խթանների համակարգում կարելի է առանձնացնել երկու հիմնական տեսակ. 1. խթաններ, որոնց անմիջական շարժառիթն աշխատողի ինքնահաստատման ձգտումն է. մարդը ցանկանում է իր աշխատանքը գնահատված տեսնել ոչ միայն նյութական, այլև բարոյական տեսակետից։ Այստեղ առկա է սեփական աշխատանքի հասարակական նշանակության գիտակցումն ու «մասնագիտական հպարտության» զգացումը։ 2. խթաններ, որոնց հիմքը աշխատողի ստեղծագործական հնարավորությունների ու կարողությունների դրսևորման ձգտումն է։

Ինչպես տեսնում ենք, բարոյական խթանները ևս ենթադրում են որոշակի նյութական հիմքեր։ Բարոյական խթանների համար այդպիսի հիմք են հասարակական շահերը։ Այդ նշանակում է, որ բարոյական խթանները բխում են ոչ թե պարզապես բարու և արդարության գաղափարին ծառայելու ձգտումից, այլ՝ սոցիալական այնպիսի խնդիրների լուծման անհրաժեշտությունից, որոնք արտահայտում են հասարակության արմատական շահերը։ «Ամեն մի գործի հաջողությունը վճռական չափով որոշվում է այն բանով, թե դրան որքան ակտիվորեն ու գիտակցաբար են մասնակցում մասսաները։ Ընտրված ուղու ճշմարտության մեջ աշխատավորության լայն խավերին համոզելը, նրանց բարոյապես և նյութապես շահագրգռելը, կադրերի հոգեբանությունը վերակառուցելը մեր աճի արագացման կարևորագույն պայմաններն են»[15]։ Ուրեմն, բարոյական խթանների բնույթն ու արդյունավետությունն անմիջականորեն կախված են այն պայմաններից, որոնցում բարոյական սկզբունքները կարող են ռեալ շարժիչ ուժերի դեր կատարել, քանի որ այդ սկզբունքները ոչ թե պարզապես գաղափարներ են, այլ գաղափարների մեջ արտահայտված շահեր։ Եթե գաղափարների համար չկան նյութական ռեալ հիմքեր, ապա դրանք չեն կարող ունենալ պրակտիկ նշանակություն։ Բացահայտելով ֆրանսիական բուրժուական հեղափոխությանը մասսաների սահմանափակ մասնակցության պատճառները, Կ. Մարքսը ցույց է տվել, որ բնակչության ոչ բուրժուական մասի համար «հեղափոխության սկզբունքները արմատական շահեր չէին արտահայտում. այլ միայն «գաղափարներ էին» և, հետևաբար, միայն ժամանակավոր ոգևորության ու թվացող վերելքի աղբյուր»[16]։

Կոմունիստական շինարարության ընթացքում առաջանում և ձևավորվում են իսկական կոմունիստական աշխատանքի տարրերը, որոնց համար անմիջական նյութական վարձատրություն չի նախատեսվում։ Այդ կարգի աշխատանքը խթանվում է բարոյապես։ Աշխատանքի բարոյական խթանների զարգացման, դրանց դերի բարձրացման նյութատեխնիկական հիմքը աշխատանքային պայմանների բարելավումն է, աշխատավորների ստեղծագործական ընդունակությունների ու նախաձեռնությունների ներդրման հնարավորությունների ընդլայնումը, աշխատանքի գեղագիտական կողմերի մեծացումը։ Բարոյական խթանների դերի բարձրացման սոցիալական ու հոգևոր հիմքը անձնական և հասարակական շահերի համընկնումն է, արտադրության կառավարմանը, աշխատավորների առավել ակտիվ ու գործարար մասնակցությունը, աշխատանքում տիրապետող կոլեկտիվիզմը։

Քանի որ նյութական և բարոյական խթանները արտադրական գործունեության ռեալ դրդապատճառներն են, ուստի կոմունիստական շինարարության արդի փուլում առանձնահատուկ նշանակություն է ստանում նյութական և բարոյական խթանների գիտականորեն հիմնավորված, ճիշտ ու արդյունավետ զուգակցումը՝ որպես նոր հասարակարգի կառուցման գլխա-

---

[15] Նույն տեղում, էջ 33։

[16] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. II, с. 89.

վոր պայմաններից մեկի։ Այս պրոցեսը բազմակողմանիորեն զարգանում է արտադրության, նյութական բարիքների բաշխման, մարդկանց գիտակցության մեջ տեղի ունեցող փոփոխությունների հիմքի վրա։ Միասնական պրոցեսի այդ երկու կողմերի ճիշտ զուգակցումը մեծ դեր է խաղում նոր մարդու դաստիարակության, նրա մոտ աշխատանքի նկատմամբ կոմունիստական վերաբերմունք մշակելու գործում։ Անդրադառնալով սոցիալիզմի ու կոմունիզմի կառուցման գործում նյութական ու բարոյական խթանների արդյունավետ զուգորդմանը, Վ. Ի. Լենինը գրել է. «Տնտեսության վերելքի գործում ամեն տեսակ հաջողություն պետք է ավելի կանոնավոր կերպով վարձահատույց լինի ինչպես Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով, այնպես էլ դրամական պարգևներով»[17]։

Չի կարելի համաձայնել այն հեղինակների հետ, որոնք կարծում են, թե մարդկանց հոգևոր պահանջմունքները առաջնություն ունեն նյութական պահանջմունքների նկատմամբ, հետևաբար և աշխատանքի հոգևոր խթանները առաջնություն ունեն նյութական խթանների նկատմամբ[18]։ Հոգևոր պահանջմունքների նկատմամբ նյութական պահանջմունքների առաջնայնության դրույթը մարքսիզմ-լենինիզմի տեսության մեջ սկզբունքային է։ Ֆ. Էնգելսը նյութական խթանները համարել է պատմական պրոցեսի «վերջնական շարժիչ ուժը»[19]։ Վ. Ի. Լենինը նյութական խթանները համարել է արմատական[20]։ Կոմունիստական հասարակության զարգացման արդի փուլում առաջին հերթին անձնական-նյութական և կոլեկտիվ-նյութական խթանման միջոցով կարելի է իրականացնել աշխատանքի հոգևոր-բարոյական խթանների զարգացումը, հետևաբար և առաջադրված խնդիրների կենսագործումը։ Աշխատանքի խթաններն արտահայտում են մարդկանց անմիջական տնտեսական շահերը, այդ պատճառով էլ բարոյական խթաններն իմաստավորվում են միայն նյութական խթանների հետ միասին, քանի որ վերջիններս նյութապես ամրապնդում և կայունացնում են բարոյական խթանները։ Արտադրողական ուժերի զարգացման և աշխատանքի կազմակերպման ժամանակակից մակարդակում կոլեկտիվի և անհատի հոգևոր ձգտումներն ու շահերը հիմնականում պայմանավորված են և իրականացվում են նյութականով։ Առանց վերջինի և անկախ վերջինից, առաջինը չի ձևավորվի և չի կարող գործել տևականորեն ու անհրաժեշտ արդյունավետությամբ։ ՍՄԿԿ XXVII համագումարում նշվեց. «Միամտություն կլիներ պատկերացնել, թե իբր տնտեսատիրոջ զգացում կարելի է դաստիարակել խոսքերով։ Սեփականության նկատմամբ վերաբերմունքը ձևավորվում է նախ և առաջ այն ռեալ պայմաններով, որոնցում գտնվում է մարդը»[21]։ Սոցիալիստական հասարակության մեջ աշխատավորներն իրենց կենսափորձով համոզվում են, որ սեփականությունը հոգում է իրենց բարեկեցության, ռեալ եկամուտների աճի մասին։ Իսկ դա հսկայական չափով մեծացնում է բարոյական խթանների դերը արտադրության զարգացման գործում, նպաստում աշխատավորների կոմունիստական դաստիարակությանը։ Այդ պատճառով էլ նյութական և բարոյական խթանների գիտականորեն հիմնավորված զուգակցումը մեր երկրում բարձրացված է օրենքի աստիճանի։ ՍՍՀՄ սահմանադրության մեջ ասված է. «Հանրօգուտ աշխատանքը և նրա արդյունքները որոշում են մարդու դիրքը հասարակության մեջ։ Պետությունը զուգակցելով նյութական և բարոյական խթանները, խրախուսելով նորարարությունը, աշխատանքի նկատմամբ ստեղ-

---

17 Վ. Ի. Լենին, նշված, հ. 44, էջ 154։

18 Н. И. Прилюдский, А. Л. Хайкин. Моральные потребности и их функции—комплексное изучение человека и формирование всесторонне развитой личности («Тезисы докладов, вып. 2. Нравственные аспекты формирования встесторонне развитой личности», М., 1975, с. 61).

19 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 22, с. 306.

20 Վ. Ի. Լենին, նշված, հ. 23, էջ 268։

21 «ՍՄԿԿ XXVII համագումարի նյութերը», էջ 55։

ծագործական վերաբերմունքը, նպաստում է, որ աշխատանքը դառնա սովետական յուրաքանչյուր մարդու կենսական պահանջը»[22]։

Այսպիսով, երևան գալով ու զարգանալով սոցիալիստական արտադրական հարաբերությունների կատարելագործման հիման վրա, աշխատանքի նյութական և բարոյական խթանները հակադարձ վիթխարի ներգործություն են ունենում արտադրողական ուժերի զարգացման, աշխատանքի արտադրողականության բարձրացման և ամբողջությամբ վերցրած՝ հասարակական զարգացման վրա։

МАТЕРИАЛЬНЫЕ И МОРАЛЬНЫЕ СТИМУЛЫ ПОВЫШЕНИЯ ПРОИЗВОДИТЕЛЬНОСТИ ТРУДА В УСЛОВИЯХ СОЦИАЛИЗМА

МАНВЕЛ АРУТЮНЯН

Резюме

Одной из практических задач коммунистического строительства является проблема дальнейшего развития стимулов к повышению производительности труда. Социалистические производственные отношения являются главной движущей силой повышения производительности труда. В качестве таковых производственные отношения порождают стимулы к повышению производительности труда и становятся объективной основой этих стимулов. Содержание и правильное сочетание материальных и моральных стимулов неразрывно связано с трудовой активностью миллионов людей, с интересами повышения эффективности общественного производства.

---

22 «ՍՍՀՄ սահմանադրությունը (հիմնական օրենք)», Երևան, 1977, հոդված 14։